## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմը, որը գտնվում է ք. Երևան, Բաղրամյան 19 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀՎՊ-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2015թ-ի դեկտեմբերի 09-ին կնքված ՀՀՎՊ-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2016թ-ի հունիսի 17-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառը :** Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի հավելված 2 հանդիսացող գնման ժամանակացույցում, հավելված 3 հանդիսացող վճարման ժամանակացույցում, ինչպես նաև Պայմանագրի 4.1 կետում կատարել փոփոխություններ:

**Փոփոխության նկարագրություն:** գնման ժամանակացույցի, վճարման ժամանակացույցի և 4.1 կետի փոփոխություն:

**Փոփոխության հիմնավորում:** Պայմանագրի 9.4 կետ

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Դ. Ղազարյան:

Հեռախոս՝ 011 888 137:

Էլ. փոստ՝ davidbe[illegible]k@yahoo.com :

Պատվիրատու՝ ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

## 09.12.2015թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ <<ՊՐԵՄԻՈՒՄ>> ՏԵՍԱԿԻ ԲԵՆԶԻՆԻ ԵՎ ԱՄԱՌԱՅԻՆ ԴԻԶՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N ՀՀՎՊ-ՇՀԱՊՁԲ-15/1 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «17» հունիսի 2016թ.

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմը, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ա. Ներսիսյանի, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Յա. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.12.2015թ. կնքված N ՀՀՎՊ-ՇՀԱՊՁԲ-15/1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաստատել Պայմանագրի N2 հավելված հանդիսացող գնման ժամանակացույցը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույց՝ համաձայն հավելված N2-ի:

1.3 Պայմանագրի 4.1 կետում «**14 294 450 (տասնչորս միլիոն երկու հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր հիսուն)** ՀՀ դրամ» բառերը փոխարինել «**12 704 600 (տասներկու միլիոն յոթ հարյուր չորս հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ» բառերով:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**
*ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ*
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 19
ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011545069
ՀՎՀՀ 00061508
Աշխատակազմի ղեկավար Ա. Ներսիսյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
*«ՖԼԵՇ» ՍՊԸ*
Հասցե՝ ք. Երևան, Ե.Կողբացու 30
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789
Տնօրեն՝ Յա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1
09.12.2015թ. կնքված N ՀՀՎՊ-ՇՀԱՊՁԲ-15/1 պայմանագրի
17.06.2016թ. կնքված համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի | | Նախատեսվում է գնել 2016 թ. | | | | | | | | | Ընդամենը (տարի) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | IV եռամսյակ | | | | |
| | անվանումը | չափի միավորը | քանակը | միավորի գինը | գինը | քանակը | միավորի գինը | գինը | քանակը | միավորի գինը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Բենզին՝ Պրեմիում տեսակի | լիտր | 7600 | 410 | 3116000 | 15300 | 380 | 5814000 | 9770 | 380 | 3712600 | 32670 | 12642600 |
| 2 | Անտայրին դիզվառելիք | լիտր | --- | --- | --- | 200 | 310 | 62000 | --- | --- | --- | 200 | 62000 |
| | | | | | | | | | | | | Ընդամենը՝ | 12704600 |

**ԳՆՈՐԴ**
*ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ*
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 19
ԿԳ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900015?069
ՀՀՎՀՀ 00061508

Աշխատակազմի ղեկավար Ա. Ներսիսյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
*«ՖԼԵՇ» ՍՊԸ*
Հասցե՝ ք. Երևան, Ե.Կողբացու 30
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789

Տնօրեն՝ Զ․ Համբարձումյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
09.12.2015թ. կնքված N ՀՀՎՊ-ԾՀԱՊՁԲ-15/1 պայմանագրի
21.01.2016թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ եռամսյակների՝ ընդ որում | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը Տարի |
| 1 | Բենզին՝ Պրեմիում տեսակի | 2999150 | 5977400 | 8930000 | 12642600 | 12642600 |
| 2 | Ամառային դիզվառելիք | ------------ | ------------ | 62000 | 62000 | 62000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ***
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 19
ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011545069
ՀՎՀՀ 00061508

Աշխատակազմի ղեկավար Ա. Ներսիսյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ՖԼԵՇ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Ե.Կողբացու 30
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789

Տնօրեն՝ Յու. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ